

8.

**ԱշՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ ԴԱՅԱՍՏԱՆԻ (ՀՀ ԵԿ ԼՂԲ) ՈԱՉՄԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՏԵԽԾՈՒՄ***

ՊԱՎԻԶ ԱԽՈԽՆՅԱՆ

Հայկական հասարակության մեջ շարունակում են ակտիվություն քննարկվել դարաբաղյան հակամարտության կարգավորման այն սկզբունքները, որոնք, ըստ պաշտոնական հայտարարությունների և ԶԼՄ հաղորդագրությունների, ներկայացվել են երկու երկրների նախագահներին՝ քննարկման, ապա ստորագրման համար: Այդ սկզբունքները ենթադրում են հայկական գորքերի դուրսբերում ազատագրված տարածքից և նրանց հանձնում Աղբբեշանին՝ բացառությամբ Լաշինի միջանցքի:

Ինչպես հայտնի է, ռազմական անվտանգությունը բնորոշվում է որպես պետության այնպիսի վիճակ, որը բացառում է սպառնալիքով կամ զինված բռնության գործնական կիրառմամբ նրա կենսական կարևոր շահերին վնաս հասցնելը: Այս վերլուծությունը հիմնված է փորձագետների շրջանակներում ընդունված այն աքսիոմայի վրա, համաձայն որի ազգային անվտանգության ապահովման հարցերում միշտ պետք է կակետային համարել իրադարձությունների զարգացման վատրագովոյն սցենարը:

Սույն հոդվածում մանրամասնորեն քննվում է այն նշանակությունը, որ ունի ազատագրված տարածքը Հայաստանի (Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) ազգային

* Հոդվածի նախնական տարբերակները լրիս են տեսել ոռուերենով, անընդունակ հայտնաբերությունը՝ www.regnum.ru/news/679147.html 18:32, 25.07.2006. Հմմտ. Գոլոս Արմենիա, 17.08.2006.

անվտանգության կարևորագույն տարրի՝ նրա ռազմական բաղադրիչի ապահովման համար: Ներկայիս Հայաստանի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ռազմական և տնտեսական առումներով լիարժեքորեն ինտերված ՀՀ-ն և ԼՂՀ-ն:

1991-1994 թթ. ռազմական հակամարտության արդյունքում որակապես բարելավվեցին հայկական զույգ պետությունների ռազմավարական դրության հետևյալ տարրերը.

1. ճակատի փոխտեղադրությունը (կոնֆիգուրացիան)

Ներկա ճակատային գծի փոխտեղադրությունը հայկական կողմի համար բավականին բարենպաստ է. արցախյան ճակատի հարավային թեր պաշտպանվում է իրանական սահմանով, հյուսիսային թեր՝ դժվարամատչելի Մոավի լեռնաշղթայով: Արևելյան ուղղությամբ՝ Մոավի լեռնաշղթայից մինչև Արաքս գետը, հայկական կողմն ունի բազմաշերտ՝ պաշտպանական մի քանի գոտիներից բաղկացած և ինժեներական առումով լավ ամրացված սահմանագիծ:

Վեց շրջանները հակառակորդին վերադարձնելու և միայն Լաշինի միջանցքը պահելու գեղքում հայկական զույգ պետությունների և Աղբբեշանի (Ներառյալ Նախիջևանը) միջև ընհանուր ռազմաճակատի գիծը կմեծանա ավելի քան 450 կմ-ով և կկազմի 1100 կմ: Ռազմաճակատի գծի երկարությունը Արցախի և Աղբբեշանի միջև կմեծանա ավելի քան 150 կմ-ով և կկազմի 360 կմ:

Հարևան թշնամի պետությունների հետ Հայաստանի սահմանների ընդհանուր երկարության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար օգտակար է հիշեցնել նաև հայկական զորքերով թույլ պաշտպանված, Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող 268 կիլոմետրանոց սահմանի գոյության փաստը:

Մեծապես ընդլայնվող ճակատի հուսալի պաշտպանության համար հայկական կողմից կպահանջվի ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական ռեսուրսների զգալի մոբիլիզացում:

Առաջին. հայկական կողմը ստիպված է լինելու մեծացնել Հայկական բանակի (Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի և Արցախի Պաշտպանության բանակի) թվաքանակը, հետևաբար և երկարացնելու պարտադիր զինծառայության տևողությունը, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ավելի մեծ թվով քաղաքացիներ ներգրավելու զինծառայության մեջ:

Երկրորդ. հայկական զորքերի նահանջից հետո հայկական կողմը պետք է կատարի զգալի ծախսեր նոր պաշտպանական սահմանագծերի ստեղծման համար: Նշված միջոցառումների իրականացումն անխուսափելիորեն կհանգեցնի ռազմական բյուջեի մեծացմանն ու, համապատասխանաբար, առանց այն էլ անբավարար պետական սոցիալական ծրագրերի կրծատմանը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

2. Պաշտպանության խորությունը

Ազատագրված տարածքը թույլ տվեց ստեղծել պաշտպանական նվազագույն անհրաժեշտ խորություն և լուծել բազմաթիվ կարևոր ռազմավարական խնդիրներ.

Առաջին. պաշտպանության ներկայիս խորությունը թույլ է տալիս ստեղծել բազմաշերտ (էշելոնացված) պաշտպանություն, այսինքն՝ պաշտպանական մի քանի սահմանագիծ ունենալու հնարավորություն: Առաջին պաշտպանական գծի ճեղքման դեպքում հայկական զորքերը կկարողանան դիմագրություն կազմակերպել հաջորդ սահմանագծերում, կանխել հակառակորդի ներթափանցումը Արցախի ներքին շրջաններ և պահել ճակատը մինչև Հայաստանից գորքերի համարում ստանալը:

Երկրորդ. Արցախի խիտ բնակեցված կենտրոնական շրջանները, ներառյալ մայրաքաղաք Ստեփանակերտը, ինչպես նաև Հայաստանի Գորիսի, Կապանի և Մեղրու շրջանների բնակավայրերը հայտնվել են աղբբեշանական հրետանու և ՄՄ-21 «Գրադ» համազարկային կրակի համակարգերի ոմբահարման հասանելիության շառավղից դուրս վիճակում:

Երրորդ. Զանգելանի, Ջերայիլի ու Ֆիզուլիի շրջանները ազատագելով և ճակատի գիծը ավելի քան 100 կմ գեպի արևելք տեղափոխելով՝

հայկական կողմը չեղոքացրել է ընդամենը 40 կմ լայնություն ունեցող և պաշտպանության կազմակերպման տեսանկյունից խոցելի Մեղրու շրջանին սպառնացող վտանգը:

Վեց շրջանները հակառակորդին վերադարձնելու և ճակատային գիծը ԼՂԻՄ-ի նախկին վարչական սահմաններ տեղափոխելու դեպքում, եթե նոր պատերազմ սանձագերծվի (որի հավանականությունը բացառել չի կարելի), պաշտպանության անհրաժեշտ խորության բացակայությունը վերին աստիճանի կրարդացնի հայկական կողմի դրությունը:

Այդ դեպքում ճակատի գիծը կանցնի Մարտակերտ, Ասկերան և Հաղորդությ շրջկենտրոններից 5 կմ, իսկ Ստեփանակերտից ընդամենը 18 կմ հեռավորության վրա: Բացի դրանից, Քարվաճառի (նախկին Քելբաշարի) շրջանն Աղրբեջանին հանձնելու դեպքում Մարտակերտի շրջանի դրությունը հնարավոր ուազմական եռակողմների խուժման դեպքում կդառնա խոցելի:

Նոր պաշտպանական սահմանագիծը, նույնիսկ հնարավոր առավելագույն ինժեներական ամրացումից հետո, չի կարող Արցախի ուազմական անվտանգության ապահովման համար հուսալի երաշխիք լինել:

Ինչպես հայտնի է ուազմական պատմությունից, հարձակվող կողմը կարող է ճեղքել ցանկացած, նույնիսկ ամենապատրաստված պաշտպանական գիծը: Այսպես՝ 1940 թ. Կարմիր բանակը ճեղքեց Ֆինլանդիայի կառուցած Մաններհեյմի գիծը, 1945 թ. անգլո-ամերիկան դաշնակից ուժերը ճեղքեցին Գերմանիայի կառուցած Զիգֆրիդի գիծը, իսկ 1973-ին եղիպտական զորքերը՝ Խարայելի կառուցած Բար-Լևի գիծը): Վճռորոշ նշանակություն է ունենում պաշտպանության խորությունը. այն թույլ է տալիս պաշտպանվող կողմին կազմակերպել նոր դիմադրության գծեր և, հակառակորդին ուժասպառ անելով, կանգնեցնել հարձակումը: Այսպես՝ 1973 թ. արաբա-խրայելական (Դատաստանի օրվա) պատերազմում, երբ եղիպտական զորքերն ընդամենը 6 ժամում ճեղքեցին Սինայի թերակղզում կառուցված, այսպես կոչված, Բար-Լևի գիծը (գծի երկարությունը 157.5 կմ, խորությունը 15 կմ), հենց պաշտպանության խորության առկայությունն էր, որ թույլ տվեց Խարայելին կանգնեցնել եղիպտոսի զորքերի առաջնազարդումը՝ թույլ շտալով ներթափանցու-

մը երկրի կենտրոնական շրջաններ, անցկացնել գորահավաք և բեկում մտցնել պատերազմի ընթացքի մեջ:

Բացի այդ, սահմանը տեղափոխելու դեպքում, Արցախի և Սյունիքի մարզի բնակավայրերի մեծամասնությունը՝ առաջին հերթին Ստեփանակերտ, Կապան և Գորիս քաղաքները, անպաշտպան կլինեն հակառակորդի հրետանու հրետակոծման վտանգի առօք: Եթե նոր պատերազմ սկսվի՝ քաղաքների, շրջկենտրոնների և գյուղերի հանկարծակի կենտրոնացված հրետակոծումն ու գնդակոծումը խաղաղ բնակչության շրջանում գգալի զոհերի պատճառ կդառնա, Արցախի և Սյունիքի բնակավայրերն ու ենթակառուցվածքը գգալիորեն կավերվեն, ինչը կարող է հանգեցնել խաղաղ բնակչության զանգվածային արտագաղթի:

3. Ռազմական հաղորդակցուղիները (կոմունիկացիաները)

Ժամանակակից պատերազմներում մեծ նշանակություն է տրվում կայուն գործող ռազմական հաղորդակցուղիներին, որոնք պատրաստված և սարքավորված են զորքերի տեղափոխման, սպառագինության, ռազմական տեխնիկայի, զինամթերքի, վառելիքի և այլ նյութական միջոցների առաքման, ինչպես նաև բոլոր տեսակի տարհանումների (էվակուացիաների) իրականացման համար: Խազմական հաղորդակցուղիների առկայությունը և նրանց անխափան աշխատանքը հայկական կողմի համար ունեն բացառիկ նշանակություն՝ հաշվի առնելով պատերազմի առաջին օրերին ճակատում հակառակորդի կողմից գգալի գերակշռություն ստեղծելու վտանգը:

Մանրամասնորեն դիտարկենք արցախյան ճակատում երկու կողմերի ռազմական հաղորդակցուղիների վիճակը.

Աղբբեջան

Աղբբեջանի խիտ բնակեցված շրջանները արցախյան ճակատի հետ կապված են երկու երկաթգծով՝ Բաքու-Եվլախ և Բաքու-Հորադիզ: Բացի այդ, գոյություն ունեն մի շարք մայրուղիներ, ինչպիսիք են Բաքու-

Շեմախա-Եվլախ, Բաքու-Կյուրդամիր-Եվլախ, Բաքու-Քիրմայ-Բայլական (Ժդանովսկի), ինչպես նաև Հարմարավետ, ճակատին գուգահեռ ընթացող, այսպես կոչված, ճակատամերձ (ոռկադային) Եվլախ-Բարդա-Ագշաբեդի-Բայլական ճանապարհ: Նման տափաստանային տեղանքով անցնող հաղորդակցուղիների առկայությունը հակառակորդին հնարավորություն է տալիս, զորահավաքն իրականացնելուց հետո, արագ, արցախյան ճակատ տեղափոխել զորքերի զգալի քանակակազմ (կոնտինգենտ), մինչ Հայաստանից զորքերի մոտենալը և բազմապատկել ուժերի և միջոցների գերակշռությունը:

Արցախ

Ճակատի ներկա փոխտեղադրության պայմաններում չորս ավտոճանապարհ Հայաստանը կապում է Արցախի և ճակատային գծի հետ. Վարդենիս-Մարտակերտ, Գորիս-Ստեփանակերտ-Ասկերան-Աղդամ, Կապան-Ջանգելան-Ջերայիլ, Մեղրի-Միջնավան-Հորադիզ: Խազմական գործողությունների դեպքում այս չորս ճանապարհների առկայությունը հայկական կողմին թույլ կտա մի քանի օրում Հայաստանից արցախյան ճակատ տեղափոխել զորքերի զգալի քանակակազմ:

Ճակատամերձ ճանապարհները վճռորոշ են ճակատի կայունությունն ապահովելու համար: Ճակատում ճեղքման վտանգ առաջանալու դեպքում ճակատամերձ ճանապարհների առկայությունը թույլ է տալիս արագ ճակատի մի մասից մյուսը տեղափոխել համագորային ռեզերվներ: Այժմ Արցախի պաշտպանության բանակի հսկողության տակ է երկու ճակատամերձ ճանապարհ. Մարտակերտ-Աղդամ-Ֆիզովի-Ջերայիլ և կառուցման ընթացքում գտնվող Հյուսիս-Հարավ մայրուղին, որը պետք է միմյանց կապի Մարտակերտը, Ստեփանակերտը, Կարմիր Շուկան և Հաղորությը:

Վեց ազատագրված շրջանները հանձնելու դեպքում հայկական զորքերի հսկողության տակ կմնա մի ճակատամերձ ճանապարհ՝ Մարտակերտ-Հադրութ, նաև Հայաստանի հիմնական մասը Այունիքի և Արցախի հետ կապող միակ՝ Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղին, որն անցնում է բարդ ռելիեֆով՝ հատելով բազմաթիվ լեռնանցքներ:

Պատերազմի վերսկսման դեպքում, հակառակորդի երկկողմանի հարձակումներից լաշինի միջանցքի պաշտպանությունն ինքնին լուրջ խնդիր է լինելու: Բայց, նույնիսկ այն պահելու դեպքում, հակառակորդը, օգտագործելով հրետանու և ավիացիայի իր ունեցած առավելությունը¹, կարող է լաշինի միջանցքը դարձնել դժվարանցանելի, ինչն էլ Հայաստանին թույլ չի տա արագորեն Արցախ տեղափոխել բավականաշափ ուազմական քանակակազմ, իրականացնել նյութական կայուն մատակարարումներ և բուժօգնություն, որոնք անհրաժեշտ են զորքերի մարտունակությունը պահպանելու համար:

Բայց Արցախի ճակատագիրը հատկապես կախված է լինելու Հայաստանից արցախյան ճակատ զորքերի արագ տեղափոխումից, քանի որ ճակատը պահելու համար Արցախի Պաշտպանության բանակի ուժերը կարող են բավարար շլինել:

Այսպիսով, ակնհայտ է, որ հակամարտող կողմերի ուազմական ներուժերի հավասարակշռության պահպանման հարցում ազատագրված տարածքը կարևորագույն դեր է կատարում: Հայկական կողմից ազատագրված տարածքի հանձնումը կհանգեցնի ուազմական հավասարակշռության խախտման՝ հօգուտ Ադրբեջանի, իսկ հայկական պետությունների ուազմական դրությունը մեծապես կվատթարանա, ինչը չեն կարողանա փոխհատուցել ոչ խաղաղ համաձայնագրերը, ոչ էլ միջազգային խաղաղապահ քանակակազմի ներկայությունը տարածաշրջանում: Դա առանձնահատուկ վտանգ է ներկայացնում, քանի որ Ադրբեջանի դեկավարությունը ընտրել է իր երկրի ուազմական ներուժի կտրուկ ուժեղացման ուղին, որի իրականացման համար 2006 թ. ուազմական

¹ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանի տեղեկատվության համաձայն, Ադրբեջանի զինանոցում կա շուրջ 700 միավոր հրետանի (<http://www.regnum.ru/news/714852.html>), իսկ ՀՀ-ն ու Արցախը, համաձայն ադրբեջանական մի ազբյուրի, ունեն 547 միավոր հրետանի (<http://www.day.az/news/politics/46824.html>): Բայց այդ, Ադրբեջանն ունի 47, իսկ Հայաստանն ընդամենը 16 ուազմական ինֆնարիտ (International Institute for Strategic Studies, The Military Balance, 2005/2006 (London: Oxford University Press, 2005), p. 108-111.

բյուջեն ավելացվել է երկու անգամ՝ 300-ից մինչև 600 միլիոն ԱՄՆ դոլար: Միաժամանակ պետք է նաև հաշվի առնել, որ Հայաստանը մոտակա տարիներին չի ունենա նույն ծավալներով ուազմական ներուժի մեծացման հնարավորություն, ինչպես Աղբքեցանը, հետևյալ հիմնական պատճառներով:

1. Հայաստանի Պետական բյուջեի շափր է Աղբքեցանի բյուջեից (1 միլիարդ ԱՄՆ դոլար 3.5 դիմաց՝ 2006 թ. դրությամբ), և այս հարաբերակցությունը մոտակա տարիներին, ամենայն հավանականությամբ, աճելու է Աղբքեցանի նավթի արտահանման ծավալի մեծացմանը գուգընթաց:

2. Հայաստանն այլևս չի կարող հուսալ, որ Խուսաստանից ուազմական տեխնիկայի զանգվածային անհատուց մատակարարում կստանա, ինչը տեղի ունեցավ 1990 թվականի կեսերին, և նպաստեց վերջին տասնամյակում հայկական կողմի և Աղբքեցանի միջև ուազմական հավասարակշռության պահպանմանը: Խազմական ոլորտում Հայաստանի հիմնական ուազմավարական գործընկերը՝ Խուսաստանը, Հայաստանի նկատմամբ վերջին տարիներին սկսեց վարել ավելի պրագմատիկ քաղաքականություն՝ առանց քաղաքական և տնտեսական արտոնություններ տրամադրելու:

Հետևաբար, միայն ազատագրված տարածքի պահպանումը, ուազմական բարեփոխումը և պետական կառավարման համակարգի ընդհանուր որակական բարելավումը հայկական կողմին թույլ կտան փոխհատուցել հակառակորդի աճող ուազմական ներուժը և ետ պահել նրան ուազմական գործողությունները վերսկսելու գայթակղությունից:

Աղբքեցանը, ուազմական հավասարակշռության փոփոխությունն ու Արցախի ամբողջ պաշտպանական համակարգում ստեղծված խոցելիությունն իր օգտին օգտագործելով, քաղաքական հարմար պահի, կարող է որոշում ընդունել Արցախն արագընթաց հարձակողական մեկ ուազմարշավի միջոցով գրավելու մասին: Ճակատը ճեղքելու համար հակառակորդը հարվածի գլխավոր ուղղություններով արագ կստեղծի ուժերի և միջոցների բազմակի առավելություն, ինչը դժվար չի լինի իրականացնել, եթե նկատի առնենք Արցախի պաշտպանության բանակի ն-

կատմամբ Աղրբեջանի զինված ուժերի ունեցած անձնակազմի և ռազմական տեխնիկայի քանակական առավելությունը, աղրբեջանական զորքերի 70 տոկոսի տեղաբաշխումը ճակատային գոտում, նաև դեպի արցախյան ճակատ զորահավաքի ենթարկված զորքերը Հայաստանից ավելի արագ տեղափոխելու հնարավորությունը։ Խազմարշավի ելքը հիմնականում կորոշվի պատերազմի առաջին օրերին ու կախված կլինի Արցախի պաշտպանության բանակի՝ ճակատը պահելու կարողությունից, որը շափազանց բարդ խնդիր է լինելու։ Իսկ Հայաստանի՝ Արցախին օգնելու հնարավորությունը, Լաշինի միջանցքի խոցելիության պատճառվ, սահմանափակված է լինելու։ Բայց եթե ճակատը ճեղքվի և հայկական զորքերը չկարողանան կասեցնել հակառակորդին Ստեփանակերտի մատուցներում, ապա ուազմական պարտության հետևանքը հայկական կողմի համար կլինի ոչ միայն Արցախի, այլև, հնարավոր է, Մունիքի կորուստը։ Արցախի գրավման դեպքում Աղրբեջանը, Թուրքիայի խրախուսանքով, հավանաբար, կփորձի իրականացնել պանթուրանական երազանքը՝ գրավել Մեղրու շրջանը, ինչն էլ թույլ կտա ապահովել ցամաքային կապ Թուրքիայի հետ և Հայաստանը կտրել Պարսկաստանից։ Այդ նպատակն իրականացնելու համար թշնամին կարող է հարված հասցնել երկու կողմից՝ Զանգելանից և Նախիջևանից։ Արցախը կորցնելուց հետո Մեղրու շրջանի պաշտպանությունը հայկական կողմի համար շափանց բարդ է լինելու, հաշվի առնելով շրջանի՝ պաշտպանության անհրաժեշտ խորության բացակայությունը և Հայաստանի հետ կապող ավտոճանապարհների խոցելիությունը։

Իրադարձությունների նման սցենարի գարգացման հնարավորության մասին կարելի է դատել Խորվաթիայում Մերբական Կրայինայի ոչնչացման հարաբերականորեն ոչ շատ հեռու անցյալի օրինակի հիման վրա։ 1995 թ. Խորվաթիայի ուազմական ուժերը, խախտելով հրադադարի մասին պայմանավորվածությունը, անցկացրին զորահավաք՝ հանկարծակի սկսելով հարձակումը, ճեղքեցին ճակատը և մի քանի օրվա ընթացքում գրավեցին Մերբական Կրայինան։ Խազմական ագրեսիայի արդյունքում՝ Մերբական Կրայինան դադարեց գոյություն ունենալ և մոտ կես միլիոն սերբեր

ստիպված եղան լքել իրենց հայրենիքը և փախստական դառնալ: Այս ողբերգությունը տեղի ունեցավ Ելրոպայի կենտրոնում՝ Մերբական Կրայինայում և Խորվաթիայում տեղակայված ՄԱԿ-ի բազմահազարանոց խաղաղապահ քանակակազմի ներկայությամբ: Ընդ որում, հարձակվող կողմի նկատմամբ որևէ պատժամիջոց չի կիրառվել:

Եզրակացություններ

1. Հայաստանի և Արցախի՝ Ադրբեջանի նկատմամբ ուազմական հավասարակշռությունն ապահովող հիմնական գործոններից մեկն Արցախյան ճակատի ներկայիս բարենպաստ փոխտեղադրությունն է, որը փոխհատուցում է հակառակորդի առավելությունը զորքերի թվաքանակի ու մարտական տեխնիկայի հարցում, ինչպես նաև նրա՝ ուազմական ներուժն ավելացնելու ավելի մեծ հնարավորությունը:

2. Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ ուազմական լայնածավալ ագրեսիա ձեռնարկելուց Ադրբեջանին հետ է պահում կողմերի միջև պահպանվող ուազմական հավասարակշռությունը, այլ ոչ թե 1994 թվականի հրադադարի պայմանագրովածությունը:

3. Ազատագրված տարածքի որևէ մասը հանձնելու դեպքում ուազմական հավասարակշռությունը կիսախտվի՝ հօգուտ Ադրբեջանի՝ նվազեցնելով Արցախի և Հայաստանի ուազմական անվտանգության մակարդակը: Սա էլ իր հերթին հակառակորդին կարող է մղել, հարմար պահ որսալով, դարաբաղյան խնդիրը ուազմական ճանապարհով լուծելու փորձ կատարել: Այդ իսկ պատճառով ազատագրված տարածքի հանձնելը հակառակորդին, հայկական պետականության անվտանգության ապահովման տեսանկյունից, բացարձակապես անթույլատրելի է:

4. Հաշվի առնելով ագրեցանա-թուրքական ագրեսիվ և ցեղասպանահակ դաշինքը, որն ունի ուազմական ճնշող առավելություն և հայկական պետականության ոչնչացման անթաքույց մտադրություն, Հայաստանի ուազմական անվտանգության հիմնական երաշխիքն են Հայկական բանակը և նրա վերահսկած ներկա տարածքը (42.000կմ²) են :